

2012թ. սեպտեմբերից 'Հայկական Կարիտաս' բարեսիրական հասարակական կազմակերպությունն **իրականացնում է** ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը գյուղական համայնքներում՝ ծրագիրը Շիրակի մարզի 60 համայնքներում: Ծրագրի իրականացման տևողությունը 36 ամիս է՝ սեպտեմբերի 1, 2012թ. - 31 օգոստոսի, 2015թ.:

Ծրագրի նպատակն է Շիրակի մարզի 60 գյուղական համայնքների բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարածման կանխարգելումը՝ իրազեկության բարձրացման և անվճար, անանուն հետազոտման հնարավորություն ընձեռնելու միջոցով: Նշենք, որ մեր կողմից իրականացվող ծրագիրը համահունչ է ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ռազմավարության հետ:

Ծրագրի խնդիրներից է խթանել անվտանգ վարքագիծ համայնքի անդամների և հատկապես միգրանտների և նրանց ընտանիքների շրջանում՝ կանխարգելիչ և իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումների միջոցով՝ համագործակցելով տվյալ համայնքների և Եկեղեցու հոգևոր առաջնորդների հետ:

Նախատեսված է ամեն տարի ընդգրկել 20 գյուղական համայնքներ :

2013-2014 թթ ծրագրի մեջ ընդգրկվել են հետևյալ 20 գյուղական համայնքները՝

1. Լուսակերտ
2. Հայրենյաց
3. Սարատակ
4. Հոռոմ
5. Շիրակավան
6. Լեռնակերտ
7. Մեղրաշեն
8. Արեւշատ
9. Ապանդարյան
10. Փոքր Մանթաշ
11. Մեծ Մանթաշ

12. Սարալանջ
13. Հառիճ
14. Փանիկ
15. Ջիթհանքով
16. Լանջիկ
17. Անուշավան
18. Սառնաղբյուր
19. Ջորակապ
20. Գուսանագյուղ